Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2016 թվականի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 110-Ա որոշման հավելվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

3)	Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման գործընթացի իրականացման ընթացակարգերը (ըստ շինարարական օբյեկտի ռիսկայնության աստիճանի/կատեգորիայի) նկարագրող Կառուցապատողի ուղեցույցի ռուսերեն և անգլերեն թարգմանություն և ՀՀ քաղաքաշինության նախարարության էլեկտրոնային կայքում տեղադրում	ակնկալվում է բարձրացնել հանրապետությունում կառուցապատման թույլտվությունների տրամադրման վերաբերյալ իրազեկվածությունը, ապահովել իրավական ակտերի դրույթների պարզաբանման և մատչելի տեղեկատվության տրամադրման գործընթացը	ՀՀ քաղաքաշինության նախարարություն		15.12.2016 թ. ֆինանսական միջոցների առկայության դեպքում	օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. սեպտեմբերի
Երևան